«ՀրազՋԷԿ» ԲԲԸ Գնահատող հանձնաժողովի նիստի

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ություն N 13-1/18.06.24

ՄՇՕԳ$_2$Կ տեսակի շարժիչի յուղի գնում կազմակերպելու և պայմանագիր կնքելու մասին

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ «ՀրազՋԷԿ» ԲԲԸ-ում 18.06.2024թ. ժամը 11^{00}–ին:

Նիստին մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ
Է.Սանամյան – Տնօրենների խորհրդի անդամ՝ անկախ տնօրեն,
Հանձնաժողովի նախագահի տեղակալ
Ա.Ավետիսյան – Ֆինանսական բաժնի պետ
Հանձնաժողովի անդամներ՝
Տ.Մարտիրոսյան - Գլխավոր ճարտարագետ
Ե.Բաղդասարյան–ԳՏ տեղակալ
Լ.Մնացականյան - Էլեկտրական արտադրամասի պետ
Ռ.Հակոբյան – Գնումների և մատակարարման բաժնի պետ
Ա.Մինասյան - ԿՏԱ պետի տեղակալ

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա.Զաքարյան

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ **օրակարգը**.

1. ՄՇՕԳ$_2$Կ տեսակի 200 լիտր շարժիչի յուղի ձեռքբերման գնային առաջարկների քննարկում, պայմանագրի կնքում:

Ընդունվել է որոշում. Կողմ՝7, դեմ՝0:

Կայանի արտադրական կարիքների և տրանսպորտի անխափան աշխատանքի համար անհրաժեշտ է ձեռք բերել շարժիչի յուղ: Նշված ապրանքի չափաքանակը գրված է 2024թ.երրորդ եռամսյակի գնումների պլանով նախատեսված ժամանակացույցով (զեկուցագիր №43, 10.06.2024թ.):

ՄՇՕԳ$_2$Կ տեսակի 200 լիտր շարժիչի յուղ ձեռք բերելու համար ընտրվել է գնման պարզեցված ընթացակարգը, համաձայն «ՀրազՋԷԿ» ԲԲ ընկերության գնումների իրականացման կարգի մասին կանոնադրության 8.4 կետի և 12 կետի դրույթների և ձևակերպվել է **ՀՋ-ՊԸ-ՇՅ-13/18.06.24** ծածկագիրը:

Ընկերության մասնագետների կողմից ապրանքի արժեքների որոշման նպատակով կատարվել է շուկայի ուսումնասիրություն: Գնային առաջարկներ ներկայացնելու հրավերներ են արվել մասնագիտացված կազմակերպություններին և ստացված առաջարկներով լրացվել է մրցակցային աղյուսակը.

Մրցակցային աղյուսակ

Գնման առարկան	Չափի միավոր	Քանակը	Ապրանքների մատակարարման վայրը	Գնման հարցում ուղարկված կազմակերպությունների անվանումները	Ստացված առաջարկությունների մասին տվյալներ /1 միավորի համար/
Շարժիչի յուղ Մ10Գ2Կ տեսակի	Լիտր	200	ՀրազՋԷԿ ԲԲԸ	1. Ավտոֆան Էյ Սի ՍՊԸ	-
				2. Արման Օիլ ՍՊԸ	1850 դր,
				3. Ժակ և Գոռ ՍՊԸ	1450 դր, ներառյալ ԱԱՀ-ն
				4. Կարեն Օիլ ՍՊԸ	-
				5. ՄոսԷսքո ՍՊԸ	1470 դր, ներառյալ ԱԱՀ-ն
				6. Ստանդարտ Օիլ ՍՊԸ	-

Ըստ ընկերության գնումների իրականացման կարգի մասին կանոնադրության, ընթացակարգի հաղթող կճանաչվի սահմանված չափորոշիչներին համապատասխանող և նվազագույն առաջարկ ներկայացրած մասնակիցը:

Վերլուծելով մրցակցային աղյուսակի տվյալները գնահատող հանձնաժողովը **որոշեց.**

1. ՀՋ-ՊԸ-ՇՅ-13/18.06.24 ծածկագրով Մ10Գ$_2$Կ տեսակի 200 լիտր շարժիչի յուղի պարզեցված ընթացակարգով գնման մրցույթում հաղթող ճանաչել «Ժակ և Գոռ» ՍՊԸ -ին:

2. Կնքել պայնամագիր «Ժակ և Գոռ» հետ, համաձայն մրցակցային աղյուսակի տվյալների, 1լիտրը 1450 դրամով՝ներառյալ ԱԱՀ-ն, 200 լիտր շարժիչի Մ10Գ$_2$Կ տեսակի յուղի ձեռք բերելու համար:

Ընդունվել է որոշում. Կողմ՝7, դեմ՝0:

Է. Սանամյան

Ա. Ավետիսյան

Տ. Մարտիրոսյան

Ե. Բաղդասարյան

Լ. Մնացականյան

Ռ. Հակոբյան

Ա. Մինասյան